ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	«Քաղաքաշինության բնագավառում նշանակալից ավանդի համար» ոսկե մեդալը բաղկացած է 2 տարրից՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշի պատկերով զոլակից և դրան կապօղակով ամրացված սկավառակաձև մեդալից: Մեդալի դետալները պատրաստվում են 925 հարգի արծաթից, պատվում են 3 մկմ հաստությամբ 99.9 հարգի ոսկով: Մեդալի քաշը պետք է լինի 25 գրամ: Զոլակն էմալապատված է ՀՀ եռագույնը խորհրդանշող եռագույն սառը էմալներով: Մեդալը իրենից ներկայացնում է 32 մմ տրամագծով շրջան: Մեդալի միջին մասում զետեղված են քաղաքաշինությունը բնութագրող տարրերի հավաքածու՝ ամբարձիչ և կամար: Մեդալը պատրաստվում է պրուֆֆ որակով: Մեդալի դիմերեսին կորաձև պետք է գրված լինի «ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ» բառերը իսկ մեդալի դարձերեսին պետք է գրված լինի «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ» բառերը: Մեդալը պետք է պատրաստված լինի կողմնորոշիչ նկարին համապատասխան: *Մեդալները պետք է տեղադրված լինեն տուփերի մեջ: Տուփի չափերն են՝ 120x130x45մմ: Մեդալի տուփը պետք է բաղկացած լինի տակամասից և ծածկամասից, որոնք միմյանց միանում են ճկուն ամրակներով: Տուփի մեջ պետք է տեղադրված լինի ներդիր, որը պետք է ունենա մեդալին համապատասխան փորվածք: ** Մեդալները պետք է ունենան իսկության հավաստագիր: *** Նմուշները և տեքստը նախապես պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: **** Ապրանքը պետք է լինի չօգտագործված: ***** Քաշի թույլատրելի շեղումը՝ մինչև 3%:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	